

Կանանչի հարսնիքի դրոյցը դեռ չէր մոռցուած, երբ արդէն խումը խումը Հայ երիտասարդներ թրքական դրօշակին տակ զինուորական շարքով կը մեկնէին դէպի Սերաստիա, բաժնուելով իրենց սիրելիներէն, թերեւս երբեք չվերադառնալու համար:

Կանանչը անոնց մէջ էր:

Հալէպ

Ս. ՊՈԶՂՈՒՐՏԵԱՆ

ՔԱՐԷ ՄԱՆՈՒԿ

... Քարէ Մանուկ, քար կ'ըրիմ:

... Մեղքը չիլիս:

... Սըկից տըտէ(1) չեթամ:

Այս էր երգում ընելու բառերն ու ձեւը մանուկ հասակի տղոց, եւ շատ անգամ կին մարդոց խօսակցութիւններուն մէջ: Հաւանօրէն պղտիկները սուրված են զանոնք մեծերէն:

Դպրոցին մէջ յաճախ կը դործածուէր երբ դերք մը կամ մատիտ մը առնել վերագարձնելու խոստում մը պիտի ըլլար երկուքի միջեւ:

— Ի՞նչ կայ, քիչ մը դերքը տուր բան մը նայիմ տամ:

— Չե՞ս տար:

— Կու տամ, մեղքը չիլիս, կու տամ, քարէ Մանուկ քար կ'ըլիմ, կու տամ, սըկից տըտէ չեթամ, կու տամ:

— Քա տղայ, հացին փշուրը մի վաթիւր կոխկրտիր, քարէ Մանուկ քար կ'ըլիս, կ'ըսէին նաեւ մայրեր, երբ անդպուշտութեամբ հաց իփշրանք թափէին գետին: Հաւերը արդէն չէին թողուր, որ ոտքի կոխան կ'ըլլան, բայց սովորութիւն եղած էր ...քար կ'ըլլիս մի վաթիւր» ըսելը:

Կը յիշեմ, էծէս քանիցս իր հէքիաթներու շարքին պատմած էր Քարէ Մանուկի աւանդական առասպելը, ինչ որ իմ հասկացողութիւններուս ու մտքիս մէջ դեռ տեղ դրաւած էր ու դեռ կը մնայ...

— «Էլիլը ժամանակը»... կը պատմէր ընկերս, «էրիկ մը կնիկ մը կան եղեր, ջաղաց մը կ'ունենան: Էս էրիկն ու կնիկը հնդտար աղքատ են եղեր, որ տուններին շորի կտոր մը պիլէ չկայ եղեր, օր մը կնիկը լեվէշ էփած ատեն ջաղան վրան կ'աղստէ, էրիկն ալ տուն կու դայ: Կնիկը սողին կը հայլ, էնդին կը հայլ ջափութի կտոր մը շի կտնեք, համան լեվաշ մը կ'առնէ ու ջաղացին տակը կը սրիէ: Աստուած Տեոէն կը տեսնէ էս շար կնիկան ըրածը, կը բարկանայ, կը պոռայ ու կ'ըսէ որ լերան վրայ իհան(2) քար կ'ըլին»...

Չարմացած աչքերով, մտիկ կ'ընէինք բոլորս ալ:

— «Էս էրիկն ու կնիկը... կը շարունակէ էծէն... «Ջաղանին կ'առնեն, հացին տախտակն ու օխջաղուն է հետերինն դուրս կ'ելլեն կ'երթան լեռը: Լեռը որ կը հասնին, ալայով քար կը կ'ըլին, կը մնան»:

Կուռնայ չուկայէն Նաշ Տեփէ երթալու ճամբուն վրայ Ծարման Մահլէի մօտերը բլուրի մը կողքին բարձր եւ սրածայր ժայռ մը կար ցցուած, որուն դապաթը քիչ մը նմանութիւն ունէր մարդու երկու գլուխներու, իսկ

1) Ասկէ աճիւն: 2) Երբամ:



ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍԵԱՆ
(ԱՓերիկահայ տաղանդաւոր Յկարիչ)



Խ. Ն. ՄԱԿԱՐԵԱՆ
(«Կիրիճի Յուշ»ի Խմբագիրներէն)

վրան ծուռ ու մուռ ցցուած քարի շերտերը կարելի էր նմանցնել տեսակ տեսակ պատկերներու : Այսպէս մեզի բացատրեք էին, թէ այդ է Քարէ Մանուկը, իր կինը, դասուկը, հացին տախտակը եւ օխրադուն հետերնին, եւ թէ ինչպէս քար էին դարձեր անոնք շատ տարիներ առաջ :

Ամէն անգամ այդ ճամբէն անցնող մը պիտի տեսնէր Քարէ Մանուկը հոն, աւանդական այդ առասպելը, դլուխը ցցած երկինք, զղջումի մը նախաձայնով կարծես, միշտ յիշեցնելու համար մեղի մեղքը . . .

— Քա սղայ, հացին փշուրը մի՛ կոխեր, քար կը կըլիս :

ԻՏԻՐԵՆՑ ԷԾԸ

Տեհօ՛ տեհօ՛

Առտու կանուխ կը լսուի հովիւին ձայնը : Ամէն տուն ախոռէն դուրս կը քշէ իր տավարը, ոչխար կամ այծ կը թափին դուրս փողոց՝ միանալու հօտին : Հովիւը կը տանի զանոնք դէպի լեռ, արծելու եւ իրիկուան վերադաձնելու համար տուն :

Ոչխարները հլու հնազանդ կը լսեն հովիւին եղանակաւոր ձայնը եւ կարծես ըմբռնելով նշանակութիւնը, կ'ընթանան առաջ. բայց այծերը՝ բնականէն վար ստեղծուած կենդանիներ, երբեք հովիւին չեն անսար :

Իտիրենց Հաճիմօր այծը, իր այծային խրաքանչիւր չարութեամբ, բոլորին դիտուն կատարեալ փորձանք մ'եղած էր : Հօտին հետ չէր մնար, կը վազէր այս ու այն կողմ, ճամբէն դուրս, փողոցի մը անկիւնը դիզուած աղտոտութիւնները կը լսփէր, պատերուն վրայի քարերը կը թափէր վար եւ կամ բաց դռնէ մը ներս սպրդելով՝ սէքին ցանուած ուրհանն ու ծաղիկները կը փճացնէր, անշուշտ իրեն հօտէն քաշելով նաեւ իր նմանները . . .

Այս անսովոր անկարգութիւններուն պատճառով, առակի կարգ անցած էր Հաճիմօր այծը :

— Իտիրենց էծուն պէս խլուխդ մի՛ առնիր աչ երթար . . . կըտէին :

— Հաճիմէր, ըսաւ Եղօ Էմմին՝ հովիւը, սա ձեր էծուն կլոխը փորձանք մը պիտի դայ օր մը չէ օր մը ամմա, հելէ հօ, աշխարհ մը ձեր էծու մասին խօսի կօ...

— Քա Եղօ Էմմի, պատասխանեց Հաճիմերը, — քա ի՞նչ էնինք, անլեզու հայլան է, կլոխն ուտէ, մենք է կլմիչ էղանք սա էծուն ձեռքէն... Աղջիկ, աղջիկ, — ձայնեց դռնէն ներս նայելով, — Եղօ Էմմուն կովլակը բեր, փիլաւին եղբ շատ լեցուր եւ քիչ մ'ալ կենեկ սոխ տիր հետը... եւ դառնալով հովիւին, — դատատ առնիմ Եղօ Էմմի, քիչուկ մը լաւ աչքով նայիր մեր էծուն... աւելցուց Հաճիմերը:

Շիտակը Եղօ Էմմին Հաճի մօր խաթրը կը համբէր ու կը համբերէր:

Օրին մէկը, Խտիրենց էծը փողոցներու մէջ ըրած իր խաղերէն չբաւականանալով, նոր միջոց մը գտեր էր հօտէն հեռանալու ու իր անօթի փորը թարմ կանաչով կշտացնելու: Ալաւ էծէին պարտէղի բանջարը շատ համով էր եկեր իր ախորժակին: Քանի մը անդամ պատին վրայ բարձրացեր էր պոտանը մտնելու համար, բայց վար ընկեր էր քար ու հող թափելով բանջարանոցը: Եղօ Էմմուն չի տեսած մէկ կողմէն կրկին բարձրանալու փորձ ըրած ատեն, պատը կը փլի կիսով ու Ալաւ էծէին կանանչ մաշարաները հողի եւ քարերու տակ կը կորսուին: Մօտիկ դրացիներ տեսնելով պատահածը, կը կանչէ կէս մը հեղնանքով, —

Ալաւ, Ալաւ, պատը փլաւ,
էծը բանջարը կերաւ...

Ալաւ էծէն բարևոիրտ կիներէն չէր, եւ երբ օրհնեալ բերանը բանար, ամբողջ թաղը դլուխը հաւաքելու կը բաւէր: Խտիրենց էծուն ըրածը չափը անցած էր այլևս: Ալաւ էծէն իր օրհնեալ բերանը բանալէ զատ, թոնիրին օրհնեալ կիկին ալ հետը վազեց պարտէղ...

— Քու տիրոջ բերանը շանը ք... կը դնեմ եւ քու էտի ոտքդ խմուխուչ չընեմ նը ինծի Ալաւ թող չ'ասին, ըսելն ու էկիչը փարտելը մէկ եղաւ...

Հաճիմերը կոխի երթալու չհամարձակեցաւ. բաւականացաւ ծինաուղ ծինաուղ իր էծուն կոտրած ոտքն ու պատած փորը խնամելով: Վէրքը ծանր էր, պէտք է մորթուի, կ'ըսէին:

— Ես քեզի չասի՞, Հաճիմեր, ինչ էնը, եղածը եղած է, մի հողար, — Եղօ Էմմին էր խօսողը:

Տարիներ անցեր են, բայց դեռ կը յիշուի Խտիրենց էծուն օրինակը:

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Հայրենի երգիքի տակ ընտանեկան ապրումներու, սովորութիւններու եւ տօնական օրերու քաղցր յիշողութիւններ մեր սրտերը կ'օրօրեն, երբ ամէն տարի նոյն օրերը կու գան ու կ'անցնին, տարբեր պայմաններու տակ:

Օտար երկնքի տակ կ'ապրինք, օտար են հողը, ջուրը, երկինքը, աստղերն ու մարդիկը, լիզուն, օտար է ամէն ինչ, անհրապոյր եւ բռնադրօսիկ են կարծես նաեւ տօնական օրերը:

Երեւակայութեամբ փափաքն ու անհատնում կարօտը կ'ունենանք հին

պապենական մեր խրճիթին տակ ապրելու, եւ զգալու վերստին երջանկութիւնը անցեալի լաւ օրերուն, ծիծղուն օրերուն:

Պահ մը կիւրին երթանք, նոր Տարիին օրը:

Աստու կանուխ, մութն ու լուսին հարսնցունները կամ նորահաս աղջիկները կապ-կապ չոր տեղիւրներն աղբիւրին մէջ թրջած են արդէն եւ ոսկի խնձորը դանդաղ դտած եւ մուրազին հասած է:

Նոր Տարիի կիրակին է: Կաղանդ է: Ամէն տուն, ամէն ընտանիք՝ հարուստ թէ աղքատ, իր տաքուկ թոնիրին շուրջ խմբուած կը տօնէ կաղանդը: Գուրջ օրերով ձիւնը եկեր, իր թանձր ճերմակ սաւանով ծածկեր է ամբողջ գիւղը, քաղաքը, լեռ ու ձոր: Տանիքները ձիւնի ծանրութեան տակ կը կքին կարծես:

Հիմա չի ձիւներ, կաղանդի օրը, պայծառ է օդը եւ տաք, արեւը իր ճառագայթները կը խրէ ձիւնի պսպղուն հատիկներուն մէջ: Կը հալի ձիւնը տանիքներուն, փողոցներն ի վար հեռզհեռէ կը սկսին անցնիլ փոքրիկ առուակներ...:

— Քա, զատատ առնիմ, Պտիկ, — կը ձայնէ Սանդուա Ապլան — տները կը կաթէ կօ, վաղէ, հէմը վաղէ, Աջապլենց թին բեր, որ ծինը քերենք վար թափենք:

Ու կը քերուին տանիքները, ձիւնի խոշոր կոյտեր կը թափուին փողոցները, կը դոցուի ճամբան դրեթէ: Թաղի աղաք խումբ խումբ լեցուած են փողոցները, ձիւնէ դնդակ կը խաղան, իսկ ուրիշներ՝ մէկ-մէկ առպրակ ձեռքերին, տունէ տուն պտտելով կաղանդէք կը հաւաքեն, երդով ու ծիծաղով:

— Կաղանդ է, կաղանդնիս տուէք — կը ձայնեն, տուներու գոները դարնելով:

Տան տիկինը կերեւի սեմին վրայ կենսուրախ, ժպիտը դէմքին, կաղանդէքներ կը լեցնէ իւրաքանչիւրին տոպրակը: Տղաքը ուրախութեամբ կ'ընդունին նուէրները բոլորէն ու կը վազեն տուն, կաղանդէք հաւաքած ըլլալու հաճոյքը կրկին վայելելու համար:

Իրիկուն է, կաղէ լամբարները կը սկսին բոցկլտալ ամէն կողմէ, տուները լուսաւորուած են: Թոնիրին վրայ դարգարուած է սեղանը, տեսակ-տեսակ չոր պտուղներով. չինիներու մէջ լեցուած, հոն են պաստիղն ու քեամէն, չոր թութն ու չիրը, կտմէջն ու բլորը, ղըժմելմենան ու դէսի կուտը, չամիչն ու լեպլեպուն, ընկոյզն ու քեստենէն եւ ինչե՛ր, ինչե՛ր... եւ այդ բոլորին մէջտեղ օղիին շիշը կամ դինին՝ մանր բաժակներով...:

Տան անդամներն ու հիւրերը, զբուցելով, կատակելով, պատմելով, համեղ ուտելիքներուն շուրջ բոլորած, միջնչեւ ուշ գիշեր, կամ յաճախ մինչեւ լոյս, զուարթ սրահը կ'անցընէին:

— Է՛, հաճախ, հաճիմեր, շնորհաւոր նոր տարի, Աստուած ամէն տարի այս օրուան հասցունէ, երկար կեանք եւ երջանիկ օրեր պարգեւէ ձեզի...:

— Ամէն:

— Տուներնիդ շէն ըլլայ, Աստուած ամէն մարդու մուրազը տայ...:

— Ամէն...:

— Աստուած աշխրջբիս խաղաղութիւն, զործի ալ յաջողութիւն տայ:

— Ամէն:

— Ձեր եւ մեր բոլորին կենացը:

— Անո՛ւշներ, անո՛ւշներ :

Եւ կը պարպուին դաւաթները, օրհնութիւններու եւ անուշներու սրտա-
րուխ մաղթանքներով :

— Հաճի՞մեր, խմէ՛, խմէ՛, մէկ դէտեֆ խմէ՛, Ղուրպաթ դացած տղայ
ունիս, Արթիւնին կենացը խմէ՛ . . .

Հաճի՞մերին աչքերէն արցունքի կաթիլներ կը դլորին այտերն ի վար,
բայց երջանիկ է իր միւս մարդահասակ դաւակներով, թոռներով ու հարսնե-
րով, կը խմէ Արթիւնին կարօտը սրտին խորերը պահած : Ժամերը կ'անցնին
ուրախ երգի ու խաղերու մէջ : Անցեր է կէս գիշերը :

Խորոզը (աքլոր) կը խօսի :

Դուրսի ցուրտը սաստկացեր է, սառեր են փողոցներն ու առուներուն
ջուրերը, շրանցքերէն (օլոխներէն) սրածայր երկար սառոյցի շերտեր կախ-
ուեր են ու կը փայլին : Զիւնին վրայ դայլի հետքեր կը տեսնուին, գայլ է
իջեր գիւղը :

Հետզհետէ փոքրիկ լուսամուտերը կը ճերմկին, կը բացուի լոյսը : Տան
կատուն միայն արթուն է եւ սենեակին մէջ այս ու այն կողմ թափուած ընկոյ-
ղի կեղեւներուն խշխշոցը հանելով կը ցատկարտէ արագ-արագ :

Նիւ Եորք

Խ. Ն. Մ.

ՏԱՂ ԱՐՄԵՆԱԳԵՂ ՏՐՏԱՌԻԹԵԱՆ

Ա.

Արեւէն մաս մը ինչպէս՝ ծաղիկներու բաժակին,
Ուր իր շնորհին է պարպած ըզձամուշի մը հոգին,
Կը բնակի՞ս դաւն մեր մէջ, արմենագե՞ղ տրտմութիւն,
ու ե՞նք քեզմով մենք լեցուն :

Խորո՛ւնկ ակունքդ է այնքա՛ն՝ որքան ակունքը ցեղին,
Որուն պանդուխտ գանձերուն գուցէ պահա՛կն ե՞նք վերջին .
Տրտփունէ՛ տրտփուն, մեկնած՝ սիրտէն դարերուն,
կը հոսի հո՛յզըդ բեղուն :

Գուն խղմամտանքն ես ըմբոստ, զինուած ուժին դէմ չարին,
Բռնու քեան դէմ նիգակուող արի բագո՛ւկն առաջին :
Այլ եւ տեսի՛լք ես պայծառ, սիրտի սրինգ, միտքի ջահ,
որ ըրիր ազգ մը՝ անմա՛հ :

Անհունատե՛նչ գիտութեան արգելափակ դուռին դէմ՝
Հանճարախանձ Մոնազին ջախջախուող գա՛նկն ես վսեմ :
Խո՛ւնկ ես նաեւ ու ազօր՛ք, լուսարարքառ մեղեդի,
Ուրկէ Աստուած կը ժպտի :

Քուչակն անհուն՝ մուք ու լոյս ըրիր պարտէզ մ'ընկարձակ,
Ուր կ'արիւնքի մարմոքին ծաղիկ ամէն ծառի տակ :
Սազը Սայեաք՝ նովային եղերանո՛յշ լարեցիր
— Բաժակ՝ յայգո՛վ դարայիր :